1. Ուսուցման արդյունքների ընթացիկ գնահատումը ուսումնառության ընթացքում սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների ստուգումն ու թվանշանային գրանցումն է՝ առարկայական ծրագրում ամփոփված չափորոշչային պահանջներին համապատասխան:

2. Ուսուցման արդյունքների ընթացիկ ստուգման եւ գնահատման համար սովորողներին տրվում են առաջադրանքներ եւ հանձնարարություններ, որոնց միջոցով բացահայտվում են.

ա) սովորողների յուրացրած գիտելիքների ամբողջությունը, կայունությունը, հիմնավորությունը, խորությունը,

բ) գիտելիքները պարզ, ոչ պարզ, բարդ, ծանոթ եւ անծանոթ իրադրություններում կիրառելու կարողություններն ու հմտությունները,

գ) կատարած մտավոր գործունեությունն արտահայտելու, ներկայացնելու, շարադրելու մակարդակը, որի բացահայտման համար հաշվի են առնվում նաեւ թույլ տրված սխալները, անճշտությունները, թերությունները եւ բացթողումները:

3. Սովորողների պատրաստվածությունը բացահայտվում է հիմնականում բանավոր հարցումների, գրավոր եւ գործնական աշխատանքների միջոցով, որոնց համար նախապես կազմվում են առաջադրանքներ եւ հանձնարարություններ ու դրանց գնահատման չափանիշներ:

Առաջադրանքներն ըստ բարդության բնութագրվում են հետեւյալ հատկանիշներով.

ա) 1-ին կարգի բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների իմացություն, պարզ եւ ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման եւ կատարման համար չեն

պահանջում ինքնատիպ (ոչ ստանդարտ) մոտեցումներ, միջնորդավորված քայլեր ու հիմնավորումներ:

բ) 2-րդ կարգի բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների կայուն իմացություն, ոչ բարդ եւ ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման եւ կատարման համար ենթադրում են որոշակի հայտնի մեթոդներ, միջնորդավորված քայլեր, ոչ բարդ հիմնավորումներ եւ չեն պահանջում ինքնատիպ մոտեցումներ,

գ) 3-րդ կարգի բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների հիմնավոր իմացություն, բարդ, կամ ոչ լրիվ ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման եւ կատարման համար ենթադրում են ինքնատիպ մոտեցումներ, հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլեր, կառուցումներ, արտածումներ, հիմնավորումներ,

դ) առավել դժվար առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութին վերաբերող չափորոշչային գիտելիքների հիմնավոր եւ խորը իմացություն, բարդ կամ անծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման եւ կատարման համար ենթադրում են բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, հատուկ մեթոդներ, օժանդակ կառուցումներ, արտածումներ, հիմնավորումներ, կռահումներ,

ե) գործնական աշխատանքների բարդության հատկանիշները որոշվում են ըստ դրանց տեսակի:

4. Բանավոր հարցումների կամ որեւէ առաջադրանքի գնահատման չափանիշներ կազմելու համար հաշվի են

առնվում գնահատման նպատակը, առաջադրանքի տեսակը եւ բովանդակությունը:

5. Գրավոր աշխատանքների ստուգման եւ գնահատման չափանիշներ կազմելու համար հաշվի են առնվում աշխատանքի տեսակը, բովանդակությունը, կատարման նպատակը (հարցարանի միջոցով կարող է ստուգվել կրթության բովանդակության տարբեր բաղադրիչներ) եւ հետեւյալ ընթացակարգը.

ա) յուրաքանչյուր հարցարանի համար մշակվում են 10 միավորանոց սանդղակին համապատասխանող գնահատման չափանիշներ: Հարցարանում ընդգրկված բարդության տարբեր աստիճանի առաջադրանքների համար սահմանվում են համապատասխան միավորներ: Հարցարանն ապահովում է չափորոշչային նվազագույն պահանջներին բավարարող պատրաստվածություն ունեցող սովորողի անցումային միավորի ստանալը:

բ) առաջադրանքի կատարման համար տրվում է սահմանված առավելագույն միավորը, եթե այն կատարված է ճիշտ, բոլոր դատողություններն ու քայլերը հիմնավոր եւ ավարտուն են, կատարված են անհրաժեշտ գծագրերը եւ շարադրված է գրագետ:

գ) առաջադրանքի կատարման համար տրվում է սահմանված առավելագույն միավորից մինչեւ 20%-ով պակաս միավոր, եթե այն ըստ էության ճիշտ է կատարված, դատողություններն ու քայլերը հիմնավոր եւ ավարտուն են, սակայն շարադրանքում թույլ է տրված թերություն, վրիպում կամ բացթողում, որը չի վերաբերում առաջադրանքի հիմնական բովանդակությանը,

դ) առաջադրանքի կատարման համար տրվում է սահմանված առավելագույն միավորից մինչեւ 50%-ով պակաս միավոր, եթե կատարված են հիմնական քայլերը, սակայն դրանք ավարտուն

չեն, կամ շարադրանքում թույլ է տրված սխալ, որը վերաբերում է առաջադրանքի հիմնական բովանդակությանը,

ե) առաջադրանքի կատարման համար տրվում է սահմանված առավելագույն միավորի մինչեւ 30%-ը, եթե թույլ են տրված էական բացթողումներ եւ սխալներ, սակայն կատարված աշխատանքում առկա են ճիշտ քայլեր, որոնք վկայում են, որ գնահատվողն ունի առաջադրանքի բովանդակությանը վերաբերող անհրաժեշտ գիտելիքներ կամ կարողություններ,

զ) գրավոր աշխատանքի գնահատականը որոշվում է նրա պարունակած առաջադրանքների կատարման համար ստացված գումարային միավորով:

6. Գործնական կամ նորմատիվային բնույթի աշխատանքների գնահատումը կախված է ուսումնական առարկայից եւ հանձնարարությունից:

7. Գործածության է երաշխավորվում գնահատման 5 միավորանոց համակարգից 10 միավորանոցի անցման հետեւյալ սանդղակը՝

5 միավորային սանդղակ	10 միավորային սանդղակ
1, 2, 2+	1, 2, 3
3-	4
3	5
3+ / 4-	6
4	7
4+ / 5-	8
5	9
5+	10

10 միավոր ստանում է երրորդ կետի դ) ենթակետի պահանջներին բավարարող հատկանիշներ դրսեւորած աշակերտը: